ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 3

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 30 հուլիսի 2020թ.

ժամը. 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Կ. Գրիգորյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի հուլիսի 30-ին, ժամը 14:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով ապրանքների ձեռքբերման նախահաշվայի արժեքները.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Ջրային հոսքերի կարգավորման փականներ	15000000 (տասնհինգ միլիոն)
2	Պտտվող սկավառակով փականների	45000000 (քառասունհինգ միլիոն)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Իմպիգռա» ՓԲԸ

1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության և «Իմպիգռա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գները

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
Չափաբաժին N:1 Ջրային հոսքերի կարգավորման փականներ			
1	«Էյչ Գրուպ» ՍՊ	25000000 (քսանհինգ միլիոն)	30000000 (երեսուն միլիոն)
2	«Իմպիգռա» ՓԲ	30580000 (երեսուն միլիոն հինգ հարյուր ութսուն հազար)	36696000 (երեսունվեց միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար)
Չափաբաժին N:2 Պտտվող սկավառակով փականների			
1	«Էյչ Գրուպ» ՍՊ	52500000 (հիսուներկու միլիոն հինգ հարյուր հազար)	63000000 (վաթսուներեք միլիոն)
2	«Իմպիգռա» ՓԲ	38490000 (երեսունութ միլիոն չորս հարյուր իննսուն հազար)	46188000 (քառասունվեց միլիոն հարյուր ութսունութ հազար)

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց: «Իմպիգռա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագիրը կազմված է ոչ բավարար բացվածքով՝ հղումներ է կատարվել արտադրող կազմակերպության տեխնիկական պայմաններին: Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցից պահանջել ներկայացնելու առավել ընդլայնված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 2020 թ. օգոստոսի 3-ին ժամը 14:00-ին ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Առաքելյան
Անդամներ՝	_____	Կ. Գրիգորյան
	_____	Գ. Խոսրովյան
	_____	Ա. Գևորգյան
	_____	Ն. Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Կ. Բարսեղյան